ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«29» ապրիլի 2021թ. № 28 - Ա

# ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 29-ի արտահերթ նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2020 թվականի Արցախյան պատերազմում զոհվածների հուշահամալիրի կառուցման աշխատանքների ձեռքբերումը անհետաձգելի համարելու և մեկ անձից գնում կատարելուն համաձայնություն տալու մասին

2. Սամբոյի Եվրոպայի պատանիների, երիտասարդների և մեծահասակների առաջնությանը Սպիտակ համայնքի մարզիկ Արթուր Գագիկի Հարությունյանի մասնակցությունը ապահովելու համար դրամական օգնություն տրամադրելուն համաձայնություն տալու մասին

ԿՈՂՄ (8) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ԳՈՌ ԲԱՐՍԵՂՅԱՆ
ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՄՅԱՆ
ՄԱՆՎԵԼ ԽՈՅԵՑՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԿՐՏԻՉ ՇՈՒՇԱՆՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ
ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 29
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» ապրիլի 2021թ.  № 29 - Ա

# 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությամբ, հաշվի առնելով, որ գնման այլ ձևերի կիրառմամբ 2020 թվականի Արցախյան պատերազմում զոհվածների հուշահամալիրի կառուցման աշխատանքները մինչև 2021 թվականի սեպտեմբերի 27-ը՝ 2020 թվականի Արցախյան պատերազմի տարելիցը, ավարտին չեն հասցվի և ընդառաջ գնալով զոհվածների հարազատների խնդրանքին՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. 2020 թվականի Արցախյան պատերազմում զոհվածների հուշահամալիրի կառուցման աշխատանքների ձեռքբերումը համարել անհետաձգելի:

2. Համաձայնություն տալ սույն որոշման 1-ին կետում նշված աշխատանքների ձեռքբերման համար մեկ անձից գնում կատարելու:

ԿՈՂՄ (8) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ԳՈՌ ԲԱՐՍԵՂՅԱՆ
ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՄՅԱՆ
ՄԱՆՎԵԼ ԽՈՅԵՑՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԿՐՏԻՉ ՇՈՒՇԱՆՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ
ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 29
ք. Սպիտակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 29 » ապրիլի 2021թ. № 30

## ՍԱՄԲՈՅԻ ԵՎՐՈՊԱՅԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԵՎ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԻԿ ԱՐԹՈՒՐ ԳԱԳԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետը՝ հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ 2021 թվականի մայիսի 24-30-ը Կիպրոսի Լիմասոլ քաղաքում կայանալիք Սամբոյի եվրոպայի առաջնությանը Հայաստանի Հանրապետության հավաքականի անդամ,Սպիտակ համայնքի մարզիկ Արթուր Գագիկի Հարությունյանի մասնակցությունն ապահովելու համար Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Սպորտային միջոցառումներ» գործառական դասակարգման «Նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման 4819 հոդվածով նախատեսված միջոցներից հատկացնել 336 000 ՀՀ դրամ՝ որպես ճանապարհածախս:

| ԿՈՂՄ(8) | ԴԵՄ(0) | ՁԵՌՆՊԱՀ(0) |
|---|---|---|

| | |
|---|---|
| ԳՈՌ ԲԱՐՍԵՂՅԱՆ | ՄԿՐՏԻՉ ՇՈՒՇԱՆՅԱՆ |
| ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՄՅԱՆ | ՀԱՄԼԵՏ ՊՈՂՈՍՅԱՆ |
| ՄԱՆՎԵԼ ԽՈՅԵՑՅԱՆ | ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ | ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ ապրիլի 29
ք. Սպիտակ